

ՌՈՒՄ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՆՏ
ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հրանտ Մաթևոսյանը մեր այն գրողներից է, որ առաջին իսկ հրապարակումներից զրավեց ռուս գրական աշխարհի սեւեռուն հետաքրքրությունը իր ստեղծագործության թեմատիկայի, նորության, համարձակության եւ գեղարվեստական արժանիքների շնորհիվ: Ռուսական միջավայրում նրան ամենաառաջին ճանաչող եւ ներկայացնողներից էր իր լավագույն ընկեր եւ գրչակից, տաղանդավոր գրող-հրապարակախոս, Հայաստանի մեծ բարեկամ *Անդրեյ Բիտովը*: Բիտովը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Մաթևոսյանի կենսագրության մեջ ոչ միայն որպես ընկեր / Մոսկվայի բարձրագույն սցենարիստական դասընթացներում/, այլև որպես նրա մարդկային բնավորության և գեղարվեստական ստեղծագործության խոր գիտակ: Նրա առաջին հոդվածը Հրանտ Մաթևոսյանի մասին ընդհանրապես ամենաառաջին արձագանքներից էր ռուս գրական միջավայրում: Ո՛ր թեպետ նա այն անվանել էր «Հովվերգություն, 20-րդ դար»¹, դրանից հետո վիճաբանությունների տեղիք տալով գրականագետների մեջ Մաթևոսյանի գրականության պատկանելության մասին, դժվար չէ համոզվել, որ բացի գեղարվեստական վերնագրից, գրականագիտական առումով այստեղ հովվերգության մասին խոսք չկա: Այս վերնագիրը ավելի շատ իր՝ հեղինակի հոգեկան դիրքորոշումն է արտահայտում Հրանտ Մաթևոսյանի գրականության նկատմամբ, քան գրականագիտական գնահատական: Անկրկնելի են հեղինակի դիտարկումները հայ գրողի մարդկային և ստեղծագործական հատկանիշների մասին: Բիտովը այդ ժամանակ հայագիր գրողից կարդացել էր միայն «Սենք ենք, մեր սարերը» և առանձին պատմվածքներ, որոնք հասցրել էին թարգմանել, սակայն մինչ այդ էլ, առանց լեզուն հասկանալու, խոր դիտողականությամբ ընկալել էր Մաթևոսյանի առանձնահատուկ նվիրումը գրականությանը: Եվ ոչ միայն ինքը: Բիտովը հիշում է, որ Մաթևոսյանը Մոսկվայում բացառել էր արտաքին ողջ կյանքը և միայն գրում էր: «Հրանտի մաքրությունը, որ միամտություն էր թվում, չէր խանգարում նրան լինել իմաստուն, որովհետև իմաստության ակունքը, կենսափորձից ավելի, Սերն է, մեծ սերը: ...Սենք բոլորս, գրչի մարդիկ, առանց որևէ բառ կարդալու, ինչ-որ պահից սկսած հանկարծ զգացինք, որ նա գրում է հիանալի արձակի իսկական, ազնիվ գործեր»²:

¹ Տե՛ս "Литературная газета", #26, 1967, Գրական թերթ, 30 հունիս, 1967:

² Նույն տեղում:

Վեճեր են հարուցել Մաթևոսյանի գրականության ժանրային պատկանելության, կրած «ազդեցությունների» և ընտրած ուղղությունների վերաբերյալ խնդիրները: Այստեղ ևս Բիտովը ուղենշային դիտողություններ է կատարում, արձանագրելով հեղինակի բացառիկ անկախությունն ու ինքնատիպությունը. «Հրանտ Մաթևոսյանի արձակը հեշտ չէ կապել ժամանակակից արձակի որևէ հոսանքի հետ: Սա ամենից առաջ մաթևոսյանական արձակ է, ինչպիսին դեռ չի եղել: ... Նա էպիկ է, մաս՝ ռեալիստ: Նա անողորմության աստիճանի հեգմոդ է և թախծող ինչպես սենտիմենտալիստ»: Բիտովի այս ձևակերպումները, զրեթե բառացի, հետագայում գրականագետների մոտ գլուխկոտրուկի առարկա էին դառնալու Մաթևոսյանի ստեղծագործության ժանրային բնութագրականները փնտրելու գործընթացում:

Ժամանակներ անց, երբ Հրանտ Մաթևոսյանը արդեն ճանաչված և բոլորի կողմից ընդունված հայտնի գրող էր, Անդրեյ Բիտովը դարձյալ անդրադարձ է կատարում նրա ստեղծագործությանը, ներկայացնելով մի ֆանտաստիկ-առասպելական մտացածին պատմություն, երազային մի սյուժե, որտեղ զարմանալի տաղանդով կարողանում է գուգորդել, միավորել մեծ գրողի, նրա փոքր եւ հալածված, բայց զարմանալի ստեղծագործ, տաղանդավոր ժողովրդի և այդ գրողի կողմից այդ ժողովրդի մասին ստեղծած գրականության ճակատագիրը: Կարծես երազի մեջ պատմում է մի փոքրիկ խումբ մարդկանց մասին, որոնք փախել են աշխարհից, բարձրացել մի ժայռի գլուխ, այնտեղ «ճամպուկներով հող տարել» և ստեղծել այնպիսի պտուղներ ու բանջարեղեն, որոնք աշխարհում տեսնված չեն: Եվ մշտական վախի մեջ են ապրում, որովհետև վստահ են, որ նրանց վրա ռումբերով պետք է հարձակվեն շրջապատի ավելի բերքառատ հողերի բնակիչները միայն այն բանի համար, որ իրենք չեն կարողանում աճեցնել այդպիսի ֆանտաստիկ մթերքներ: Բիտովն այստեղ, ակնհայտորեն, ոչ միայն հայոց ճակատագիրը նկատի ունի, այլև Մաթևոսյանին՝ իր այլաբանության մեջ: Ավելի հավանական է երկուսինն էլ, առասպելական կերպով միափյուռված: Այստեղ արժարժվող Նոյի մոտիվը (ծեր հասակում իր համայնքից առանձնանալու թեման) գրականագետ Լ. Աճինսկու ուշադրությունն էլ է գրավել, զուցե մաս մտահղացում է տվել: Սակայն Բիտովի մոտ սա միաժամանակ և մարդկության նկատմամբ առաքելություն ունեցող գրողի ճակատագրի մասին է, և մարդկային ամբոխի սխալակաճության մասին (ինչի մասին էր և բիբլիական Նոյի առասպելը), հասնելով շատ խոր ընդհանրացումների. «Թաքնվել ռումբից, երբ վերահաս է ջրհեղեղը, փոս փորել, երբ հարկավոր է նավ կառուցել»³...

Մաթևոսյանը Բիտովի արձագանքներին նայում էր որպես ընկերոջ, յուրահատուկ «տնավարի», կարծես առանձին կարևորություն չտալով: Սակայն

³ Битов Андрей. Постскрипtum через пятнадцать лет. Лит. Армения, 1983, # 34 с 105.

միևնույն է, Անդրեյ Բիտովը Մաթևոսյանին ամենախորը հասկացող գրական գործիչներից մեկն է մնում, ում բնութագրականները շատ մեծ խորք ունեն և միշտ պահպանում են արդիականությունը:

Ռուս զրաքննադատների ուշադրությունը Հրանտ Մաթևոսյանը գրավեց 70-ականների սկզբից. «Մենք ենք, մեր սարեր» ի թարգմանությունից անմիջապես հետո: Այդ ժամանակ Ռուսաստանում բուռն քննարկումներ էին գնում մի ակտուալ գրական երևույթի այսպես կոչված «գյուղի գրականության» խնդիրների շուրջ, և Մաթևոսյանը իր ստեղծագործությամբ միանգամից հայտնվեց այդ շրջապատույթի մեջ. անմիջապես ներգրավվելով Վասիլի Բելովի, Վասիլի Շուկչինի, Իոն Դրուցեի, Հինգիզ Այթմատովի, Ֆազիլ Իսկանդերի և մի քանի այլ չափազանց ուշագրավ ստեղծագործողների շրջապատում, օրգանապես տեղավորվելով այդ քննարկումների թեմատիկայի մեջ: Մաթևոսյանին առաջինը բացահայտած ռուս քննադատների մեջ աչքի էր ընկնում *Ալլա Մարչենկոն*, որ նկատելով Մաթևոսյանի հայացքների լայնությունը, դրական կերպով, դարձյալ դուրս է դնում նրան զուտ «գյուղական» հոսանքից: Հրանտ Մաթևոսյանի «գյուղագրության» թեման (չփոթել 19-րդ դարի գյուղագրության հետ) ամենաքննարկված հարցերից է, որ միշտ առանձին խոսակցության նյութ է եղել: Սակայն Մարչենկոն, դեռևս Մաթևոսյանի սուղ թարգմանությունների վրա հենվելով, փորձում է ստանիալ մի պատկեր, ըստ որի գյուղական թեմատիկան այն ձևով, ինչ սովորաբար ընկալվում է, վճռորոշ չէ այս գրողի համար, որ այն ընթանում է «զուգահեռ» քաղաքային թեմատիկային: Ակնհայտորեն, այս «քանակական» մոտեցումը այն միակ ճանապարհը չէր, որով առաջ գնալով պետք է գնահատվեր հայ գրողի ստեղծագործությունը: Սակայն նրա եզրակացությունը միանգամայն ընդունելի է. «Մաթևոսյանական պատումի հիմնական պաթոսն այն է, որ մարդուն բնության հետ կապող հնադարյան շղթաները խախտված են, բայց կտրված չեն»⁴: Ո՛ր թեև Մաթևոսյանի «գյուղագրության» բանալին Մարչենկոն չի գտել, այնուամենայնիվ նրա դիտարկումը անվերապահորեն ճշմարիտ է որ սա չի կարելի խառնել «պոլիներգիական ապրելակերպի» քարոզչության հետ, և որ Մաթևոսյանի մոտ առկա է այն սթափ գիտակցությունը, որ «բնությանը երկրպագելու» անուժ և անպատասխանատու գործելակերպը ելք և նույնիսկ ելքի փնտրում չէ:

Ռուս գրականագետները առաջնային ուշադրության մեջ էին պահում և Մաթևոսյանի ժանրային ինքնատիպությունը, քանի որ այն, ձևավորված լինելով միանգամայն ինքնուրույն, ճշգրտորեն համապատասխանում էր այդ շրջանում սովետական գրականության մեջ տեղի ունեցող գործընթացներին, հաստատում դրսևորվող օրինաչափությունները: Խոսքը վիպակի (повесть) մասին է,

⁴ Марченко, Алла. Время искать себя. Размышления о молодом герое современной прозы. Новый мир, # 10, 1972, стр. 223.

որը հատկանշական էր դարձել այդ ժամանակի արձակի համար, որոշակիորեն դուրս մղելով ծավալուն վեպերը: Մաթևոսյանը, որ այդ միտման ցայտուն ներկայացուցիչներից էր, չատերը գտնում են, որ պարզապես հետևում էր վիպակի դասական ժանրին: Այսպես, նշվում է, որ «Մաթևոսյանը ոչ մի տեղ չի անցնում վիպակի թույլատրած «հոգու խորքերը թափանցելու» մակարդակը: Նրա անկեղծությունը խիստ դժգոհություն է, կարծես սահմանափակվելով վիպակային հանձնարարության շրջանակում»⁵: Ճիշտ ինչպես Շուկչինի, Իբրահիմբեկովի և այլոց մոտ: Մաթևոսյանի գիտակ Մարչենկոն դրա մեջ տեսնում էր ժամանակակից տեղաշարժերը անցումը «ստալինյան կլասիցիզմից» դեպի մտածողության պարզություն և առարկայականություն: Նա, քննելով մասնավորապես վիպական ամբողջություն կազմող պատմվածաշարերի հետաքրքիր երևույթը (Բելովի «վոլոգոդյան», Մաթևոսյանի «Անտառամեջ, հետագայում՝ ծնակուտյան» շարքերը և այլն), եզրակացնում է, որ «...խնդիրը այնուամենայնիվ ավելի բարդ է, և ոչ թե վիպակն է փոխարինում վեպին, այլ վեպը, ձևափոխվելով ժամանակի պահանջներին համապատասխան, ձևափոխում է վիպակի կառուցվածքը, «վիպականացնում» է այն: ... Վիպականացվում է ոչ միայն վիպակը, այլև պատմվածքը: ... Մենք գործ ունենք ոչ թե «ամած» պատմվածքի, այլ նոր ժանրային ճյուղավորման հետ, որի հիմնական հատկանիշն է ավանդական պատմվածքի համեմատ զգալիորեն ավելի մեծ կոմպոզիցիոն պատումային ազատությունը»⁶:

Հիմա Մաթևոսյանի ամենաառաջին և ամենագիտակ մեկնաբաններից է ռուս գրականագետ *Լև Աննիսկին*, որ ուշադրությամբ հետևեց գրողի ստեղծագործությանը իր ողջ կյանքի ընթացքում: Նա զարմանքով է արձանագրում, որ Մաթևոսյանի ստեղծագործությունն անվանում են «իդիլիա», «հովվերգություն» (այստեղ նկատի ունի Բիտովին, վերը մենք նշեցինք, որ վերջինիս մոտ այդ անվանումը բոլորին այլ նպատակ ունի) և նույնիսկ գտնվում են մարդիկ, ովքեր այն բնութագրում են որպես. "Будущее пряменько к пещерной цивилизации" (այստեղ էլ ակնարկում է Մաթևոսյանի հայ քննադատներին): Աննիսկին նշում է, որ էլեգիական փոքրիկ ամպը Մաթևոսյանի մոտ միայն ծածկում է անհատի սուր դրաման, իսկ սիրահարվածությունը գյուղի նկատմամբ, որը այսօր գտնում ենք և ռուսական արձակում, և մոլորակականում, և ուկրաինականում, և լիտվականում և այլուր, դա ոչ թե կոնսերվատիվիզմով է պայմանավորված, այլ միայն մի խոր և կարևոր գործընթացի բարոյականության փնտրումի նշան է: Հարկ չհամարելով հատուկ անդրադառնալ Մաթևոսյանի քննադատներին (որոնց մասին, ինչպես երևում է, նա քաջ գիտի),

⁵ В. Камянов, "Земля — эмпирии — обратно", Дружба народов, 1974, #3.

⁶ Марченко, Алла, "Для восполнения объема (Заметки о художественном опыте современной прозы)", Вопросы литературы, #8, 1974, стр. 57—58.

ԱՆՆԻՆՍԿԻՆ արձանագրում է. "Договоримся, что Матевосян, как один из интереснейших писателей нынешней Армении, имел полное право написать все, что он написал"⁷. Այսօր, երբ Մաթևոսյանը բոլոր տեսակետներից հաստատել է իրեն, այս արձանագրումները պարզ ճշմարտություն են ներկայացնում, սակայն պետք է պատկերացնել, թե դրանք որքան կարևոր էին 70-ականների սկիզբին բոլորովին երիտասարդ եւ իր ստեղծագործական համարձակության շնորհիվ արդեն մեծ պրոբլեմներ հարուցած գրողի ինքնահաստատման համար. ԱՆՆԻՆՍԿԻՆ համոզիչ կարողացավ ապացուցել, որ մաթևոսյանական ծգտումը դեպի գյուղ դա ոչ թե քաղաքակրթության մերժումն է, այլ քաղաքկրթության անգործությունը բավարարելու նրա էսթետիկական պահանջները: Լ.ԱՆՆԻՆՍԿԻՆ ի սկզբանե մեծ ավանդ է բերել մաթևոսյանագիտության մեջ, և այսօր էլ այն թարմ է մնում և ակտուալ: Ուշագրավ են նրա վերլուծությունները Մաթևոսյանի պանթեիզմի վերաբերյալ: Նա հետաքրքիր թեմատիկ նմանություններ է հայտնաբերել և դրանք տիպաբանական համեմատական վերլուծության ենթարկել Յ. Մաթևոսյանի և Վ.Բելովի, Վ.Շուկշինի, Ի.Դրուցեի ստեղծագործություններում: ԱՆՆԻՆՍԿԻՆ երկար ժամանակաշրջանում ուշադրության կենտրոնում է պահել Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործությունը, հետևել նրա զարգացման օրինաչափություններին: Նա առանձնացնում է 60-70-ականների «առաջին ծնիալի» Մաթևոսյանին և 70-80-ականների Մաթևոսյանին, երբ նրա ստեղծագործությունը էլ ավելի է խտացել և խորացել: "Эта тяжелая плотность заставляет теперешних читателей искать Матевосяну совершенно другие параллели, чем раньше: Уже не Белов и Шукшин, а Шолохов и Толстой, и еще: его теперь нередко сопоставляют с писателями латиноамериканской "школы", в полушутку его даже называют армянским Фолкнером; в этом есть доля истины"⁸. Մաթևոսյանի վաղ պանթեիզմին փոխարինելու է զալիս կյանքի դաժան ճշմարտություններին հակադրվել կարողանալու պահանջը, նրա ստեղծագործությունը դարձնելով ավելի էպիկական: Սակայն այդ էպիզմի հարցում ԱՆՆԻՆՍԿԻՆ մի հետաքրքիր գյուտ է անում նա Մաթևոսյանի էպիզմը անվանում է «շուռ տված էպոս» ("вывернутый эпос"): Այսինքն, ստեղծելով նույն էպիկական աշխարհի խորությունը, Մաթևոսյանը էպոսի հերոսականության փոխարեն պահպանում է ժամանակակից գրողի իր ռեալիզմը: Եվ դրանով նրա հերոսները, իրենց մեջ ամփոփելով նույն էպոսի մակրոկոսմը, մնում են շարքային, փոքր հնարավորություններով, արտաբուստ այն «փոքր մարդիկ», որոնց այդպիսին է ստիպել

⁷ Л. Аннинский, "Мятежная безмятежность. (Этическая проблема прозы Г.Матевосяна)". Литературная Армения, #7-8, 1971, стр. 139.

⁸ Л.Аннинский, Герои перевернутого эпоса. Предисловие к книге Гранта Матевосяна "Похмеле". Москва, Худож. литература, 1984, стр. 3.

դառնալ կյանքը: Էպոսի հերոսը ոչինչի առջև կանգ չի առնում և ամենուր հաղթում է, Մաթևոսյանի հերոսը, իր ներսում կրելով նույն հսկայական ապրումները, ժամանակակից իրականության մեջ անընդհատ կոտորվում է, անընդհատ պարտվում: Այդպիսին է Մաթևոսյանի Մեսրոպը:

Եւել եմք, որ ԱճԻՆՍԿԻՆ այն ռուս գրականագետն էր, որ նկատել և արձանագրել էր Մաթևոսյանի ոճի յուրահատուկ կտրուկացումը և խստացումը 80-ականներին, դա կապելով վերակառուցման շրջանի հետ: ԶՆՆադատը չի կարողանում դա հասցնել ազգային զարթոնքին և կայսրության փլուզմանը, բայց գրեթե հասել էր դրան: Նա սա ընկալում է ընդհանուր մարդկային, փիլիսոփայական իմաստով և ոչ թե ազգային: Բայց դա իր այլազգիությամբ չենք բացատրում. "Эпоха гласности" кое что высветила нам в "Эпохе застоя" ... Матевосян продолжает ту разоблачительную работу, которую начали сегодня самые смелые наши публицисты. Он чистит землю".

Վերակառուցման հետ ռուս գրական շրջանակները անմիջապես վերանայեցին նաև Հրանտ Մաթևոսյանի սովետական շրջանի ծակատագիրը, գնահատելով այդ ծանր շրջանում նրա սկզբունքային դիրքորոշումները գրականության մեջ և հասարակական դրսևորումներում: Առաջին անգամ, ի թիվս սովետական շրջանի առաջադեմ գրողների, խոսվեց նաև նրա դժվարին գրական ճանապարհի մասին. "... Как пагубно сказались на развитии культуры каждого народа СССР навешивание ярлыков, обвинения в национализме, безыдейности, в воспевании патриархальности и, конечно, в абстрактном гуманизме.... таких обвинений не избежали многие крупные писатели: М. Рыльский и В. Сосюра, Алибек и М. Ауэзов, И. Друце и И. Чендей, Н. Думбадзе и Г. Матевосян, П. Севак и В. Быков..."⁹

Ինչպես երևում է, սա վերջին մոտեցումն է Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործությանը՝ որպես այն լայնածավալ գրականության հետ մի ամբողջության, որ կոչվում էր սովետական, և որը այնքա՛ն գնահատում էր հայ մեծ գրողը: Կողմնորոշումները մոր գրականության նկատմամբ ռուս գրական քննադատությունը դեռևս պետք է ձևավորի: Մաթևոսյանը իր ողջ ստեղծագործական կյանքում մնաց ռուս գրականության և գրական շրջանակների հետ սերտ, անբաժանելի կապի մեջ: Ռուս գրական ողջ արծագանքները քննելով մեկ եզրակացության ենք հանգում որ ռուս իրականությունը երկրորդ հարազատ միջավայրն էր, որը պատրաստականությամբ և խորությամբ ըմբռնեց և գնահատեց Հրանտ Մաթևոսյանի տեղն իր ժամանակի գրականության մեջ:

⁹ Давид Кугультинов, Писатель и перестройка. Вопросы литературы, #8, 1988, стр 16.